Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջն. դպրոց

Առարկա՝ Տեխնոլոգիա

Թեմա՝ Տեխնոլոգիա առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթություն

Վերապատրաստող, մենթոր՝ Ն. Հովհաննիսյան

Ուսուցիչ՝ Ա. Հարությունյան

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ - - -

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

“Հայաստանի պատանեկան նվաճումներ” կազմակերպության կողմից, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երաշխավորմամբ և հաստատմամբ , դպրոցներում Տեխնոլոգիա առարկայի ծրագրում ՝ որպես բաղադրիչ ընդգրկված է Ձեռնարկատիրական կրթությունը :

Ձեռնարկատիրական կրթության նպատակն է, որպեսզի աշակերտները վաղ տարիքից ծանոթանան ձեռներեց և ձեռներեցություն, բիզնես գաղափար, շուկայի հետազոտություն, մարկետինգ, բիզնես պլան և բիզնես էթիկա հասկացությունների հետ: Քանի որ ձեռներեցությունը անձի՝ իր մտահղացումը կամ գաղափարը փող վաստակելու նպատակով գործողության և արդյունքի վերածելու ընդունակությունն է, հետևաբար, այս երկու ոլորտները՝ ձեռնարկատիրական կրթությունը և տեխնոլոգիան կնպաստեն, որ սովորողների մոտ զարգանան թե՛ բիզնես գաղափարներ մտածելու, թե՛դրանք կյանքի կոչելու կարողությունները: Եթե տեխնոլոգիան աշակերտներին օգնում է սովորել՝ ինչպես կարելի է սեփական ձեռքերով առարկաներ և իրեր պատրաստել, ապա ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը օգնում է նրանց հասկանալու ՝ արդյոք այդ առարկան պիտանի է օգտագործման համար, արդյոք այն ունի պահանջարկ և կարող է հետաքրքրել մարդկանց այնքան, որ նրանք պատրաստ լինեն այն գնելու, արդյոք իրենք պատրաստելու ճիշտ առարկա են ընտրել,այդ առարկայի ընտրումով ինքը չի վնասում շրջակա միջավայրը և բնությունը: Ձեռնարկատիրական բաղադրիչի ներդրումը ենթադրում է, որ աշակերտը պետք է հասկանա և գնահատի իր պատրաստած առարկայի ապրանքային արժեքը, պարտադիր չէ, որ նա անպայման վաճառի այն:

Հետազոտության նպատակը՝

➢ Ուսումնասիրել՝ որքանով է անհրաժեշտ և արդյունավետ Ձեռնարկատիրական կրթության ինտեգրումը դպրոցում:

➢ Ձևավորել ձեռնարկատիրական գործունեության գաղափարները մտածելու և ներկայացնելու կարողությունը:

➢ Ձեռնարկատիրական գործունեության իրականացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

«Տեխնոլոգիա» հունարենից թարգմանաբար նշանակում է արվեստ, ունակություն, վարպետություն: Տեխնոլոգիա առարկայի դերն է զարգացնել երեխայի մեջ հոգեբանական, ինքնուրույն, կոնստրուկտիվ մտածելակերպը, ստեղծագործական ունակությունները: Տեխնոլոգիայի ուսուցումը գնում է դեպի հին աշխարհի խորքերը: Տարեց տղամարդը ժեստերի միջոցով և պարզունակ խոսքերով սովորեցնում էր իր տոհմի երիտասարդ անդամներին պատրաստել և օգտագործել պարզագույն աշխատանքային գործիքներ: Կրթել աշակերտներին տեխնոլոգիապես նշանակում է ձևավորել հասարակության ու պետության շահերին նպաստող, անհրաժեշտ գիտելիքներով, ունակություններով և հմտություններով, աշխատասեր, ժամանակակից տեխնիկա–տեխնոլոգիական առաջընթացին ծանոթ, մասնագիտորեն ինքնակողմնորոշված անձ:

Աճող սերնդի համակողմանի ու ներդաշնակ զարգացման գաղափարը հետաքրքրել է ֆրանսիացի լուսավորիչ- փիլիսոփաներ Կ. Հելվեցիուսին, Դ. Դիդրոյին և ուրիշներին: Նրանք մարդու համակողմանի ու ներդաշնակ զարգացման պահանջի մեջ առանձնացրին հատկապես մտավոր և բարոյականդաստիարակության դերը, գտնելով, որ դրանք իրենց կապերի միջոցով կընդգրկեն այլ բաղադրիչներ: Ի տարբերություն նրանց , Ժ. Ժ. Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ նաև աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի:

«ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԸՍՏ

ԻՆՏԵԳՐՎՈՂ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

Ո՞վ է ձեռնարկատերը և ինչպիսի՞անձնային հատկանիշներ պետք է նա ունենա.

- Պետք է բարիք արտադրի:
- Պետք է նորարար և ստեղծարար լինի:
- Պետք է լավ տեղեկացված լինի շուկայի պահանջարկի և իր մրցակիցների մասին:
- Պետք է կազմակերպված լինի և պլանավորի իր աշխատանքը:

Ծանոթացել են Ձեռնարկատիրական գործունեության հիմնական տեսակների հետ: Դրանք են՝ Ձեռնարկատիրություն և ռիսկ, Անհատ ձեռնարկատեր, Ի՞նչ է առևտրային կազմակերպությունը, և որո՞նք են առևտրային կազմակերպությունների տեսակները, Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: Ձեռնարկատիրոջ կողմից ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակը շահույթ ստանալն է, իսկ այդպիսի գործունեություն ծավալելու համար նա պետք է լինի նախաձեռնող, ստեղծագործող և պրպտող մարդ՝ հավելելով նաև, որ ձեռնարկատերը պետք է մտածի քննադատաբար և գործունեության ընթացքում դիմի ռիսկի:

Տեխնոլոգիա առարկայի և ձեռնարկատիրության կապը

Մանկավարժության մեջ «ուսուցում» եզրով սահմանվում է մի գործընթաց, երբ գիտելիքն ու հմտությունները կիրառելի են դառնում, որի արդյունքում փոխվում է երեխայի վարքագիծը, նաև այնպիսի գործընթաց, երբ սովորողը, գիտելիքներից և տեղեկություններից բացի, կարիք ունի մտածողության մշակման և համագործակցային հմտությունների ձևավորման ու զարգացման:Այդ առումով անգնահատելի է աշխատանքի կիրառումը՝ որպես ուսուցման և դաստիարակության մեթոդի կիրառումը գործընթացում :
Արդյունավետ ուսուցումը նպաստում է երեխայի ինքնակազմակերպմանը և ինքնուրույնությանը. այն սկսվում է դեռևս կրտսեր դպրոցական տարիքից, երբ ուսուցչի կողմից ստեղծվում է համապատասխան միջավայր և ապահովվում լավ արդյունք: Ինքնուրույն աշխատանքը և սեփական գործունեությունը դարեր շարունակ եղել են երեխաների կողմից իրականության ընկալման, առաջին սոցիալական փոխհարաբերությունների զարգացման, նրանց մտավոր և հուզակամային զարգացման գրավականը: Դա երեխայի համար խաղ է, իսկ ուսուցչի կամ ավագների համար՝ ուսուցման միջոց: Խաղի նպատակն ուսումնական գործունեության ծանրաբեռնվածության թեթևացումն է:
Այդ է պատճառը, որ ուսուցումը կազմակերպելիս պետք է հաճախ ստեղծել խաղային իրավիճակներ և աշակերտներին մոտիվացնել: Չէ՞ որ մոտիվացիան առավել գրավիչ է դարձնում ուսուցումը, կենտրոնացնում երեխայի ուշադրությունը, խթանում մտածողությունը:
Մոտիվացիան ճշգրտում և ընդլայնում է երեխայի պատկերացումները շրջապատի, բնության, հայրենիքի, ծնողների և ընդհանրապես աշխարհի մասին, դաստիարակում նրանց մեջ ուշիմություն, աշխուժություն, զսպվածություն և այլ դրական հատկանիշներ: Ձեռնարկատիրական դասերը դառնում են հետաքրքիր ու հաճելի, երեխաների մեջ առաջանում է եռանդուն աշխատանքային տրամադրություն, հաղթահարվում են ուսումնական նյութի յուրացման դժվարությունները: Դասերն ապահովում են երեխաների բոլոր զգայարանների մասնակցությունը ուսումնական գործընթացին, ինչն ըստ անգլիացի մանկավարժ հոգեբան Էդգար Դեյլի կարևորագույն պայման է երեխաների գիտակցության, ճանաչողության, մտահորիզոնի զարգացման համար:

Դասերի ճիշտ կազմակերպման,մասնավորապես, նրանց նպատակների միջև գոյություն ունեցող կապերի մասին ուշագրավ եզրահանգում է կատարում ռուս մանկավարժ Մ. Է. Վայները՝ կարևորելով ուսումնական գործընթացում մտավորի և զգացմունքայինի միասնությունը։ Ընդունելով Լ. Ս. Վիգոտսկու և Ս. Լ. Ռուբիյնշտեյնի այն տեսակետը, որ երեխաների մտավոր զարգացման ուղղությամբ պայմաններ ստեղծելու համար անհրաժեշտ է մտավոր և զգացմունքային գործընթացների միասնության
ապահովում՝ Մ. Է. Վայները նշում է. «...առաջին հերթին երեխայի զարգացման գործընթացում անհրաժեշտ էպահպանել րա զգացմունքային և մտավոր ներուժի ներդաշնակ հավասարակշռությունը ...
Երկրորդ՝ անհնար է երեխայի լիարժեք, եթե զգացմունքների ձևավորման անբավարարվածություն կա։ Զգացմունքները չեն կարող փոխարինվել, ճանաչվել մտավոր կարողություններով, քանզի դրանց բացակայությունը կամ զգացմունքային ոլորտի աղքատությունը կհանգեցնեն մտածողական գործընթացների պասիվության;

Այս դասերն անհամարձակ, անվստահ աշակերտներին հնարավորություն են տալիս հաղթահարելու իրենց բարդույթներն ու անվճռականությունը։ Ռուս գիտնականներ Ի. Աբիլգազիևը, Դ. Զեմցովը, Ա. Ֆեդոսեևը և Ի. Իյինան նշել են, որ դերային խաղերի շնորհիվ սովորողները ստանում են սոցիալական դերեր,որոնք, սակայն պիտի համապատասխանեն երեխաների կարողություններին ու գիտելիքի մակարդակին,որպեսզի սահմանված նպատակներն իրականացվեն։

Դիդակտիկական խաղը,- գրել է ռուս մանկավարժ Ի. Յակովլևան,- ուսուցչի և աշակերտի նպատակաուղղված ու փոխկապակցված գործունևությունն է՝ ստեղծելով իրական պայմաններ աշակերտի կողմից գիտելիքների, կարողությունների ու հմտությունների յուրացման համար։
Պետք նշել նաև, որ ձեռնարկատիրական դասերը շրջակա աշխարհի ճանաչման գործընթաց են ,որոնք օգնում են բացահայտելու մեզ շրջապատող իրականության իրերի ու երևույթների միջև եղած բազմաթիվ կապերն ու հարաբերությունները, բացի դրանից խաղը նաև տարածական կողմորոշման զարգացման կարևորագույն հնար է, որն ուղղակի անհրաժեշտություն է կյանքի դժվար իրավիճակներից արագ ու ճիշտ ելքեր փնտրելու համար։

Դիդակտիկ խաղը ուսուցման միջոց է, որը ձևավորում է ինքնուրույն սովորելու ունակություն՝ ելնելով երեխաների ինքնավերլուծության և ինքնագիտակցության կարողություններից։ Առօրյայի հետ կապը ուսուցմանգործընթացում հնարավորություն է ընձեռում ուսուցչի աշխատանքն առավել բազմազան ու ճկուն դարձնել։

Դիդակտիկական խաղը,գրել է մանկավարժ Ի. Յակովլևան, ուսուցչի և աշակերտի նպատակաուղղված ու փոխկապակցված գործունեությունն է՝ ստեղծելով իրականպայմաններ աշակերտի կողմից գիտելիքների,կարողությունների ու հմտությունների յուրացման համար։Դպրոց մտնելուց հետո երեխան իր համար բացահայտում է նոր աշխարհ, որտեղ նրա գործունեությունը չի ունենա անհրաժեշտ արդյունքներ, եթե այդ ընթացքում չգտնվի երեխայի ներաշխարհ թափանցելու բանալին։Այս տեսանկյունից անմիջական դասը երեխայի ներաշխարհ թափանցելու յուրատեսակ միջոց է։ Այն հնարավորություն է տալիս ձևավորել որոշակիարժեքային համակարգ,լուծել դաստիարակչական բազմաթիվ խնդիրներ,զարգացնել ստեղծագործական մտածողություն։ Իրեն հարազատ միջավայրում երեխան առավել ակտիվ է, որովհետև նա դառնում է դեպքերի հետագա զարգացման կարևոր շարժիչ ուժ։ Դրա համար անհրաժեշտ է, որ սովորողները հաճույք ստանան ուսուցման գործընթացից, իսկ դա տեղի կունենա այն դեպքում, երբ անցումը խաղից ուսումնական գործընթաց կատարվի տրամաբանորեն, այսինքն՝ այնպես,որ սովորողներն այդ անցումը չնկատեն։Արդյունքում նրանց թվում է, թե իրենք ուղղակի խաղում են, կատարում են որևէ դեր։ Սակայն իրականում այդպես չէ,քանի որ յուրաքանչյուր դիդակտիկական խաղ երեխային առաջադրում է այնպիսի խնդիրներ,որոնց լուծումը պահանջում է մտավոր լարվածություն։ Այլ կերպ ասած՝ երեխան սովորում է հաղթահարել կյանքի դժվարին իրավիճակները։Արդյունքում երեխաների մեջ դաստիարակվում են այնպիսի հատկանիշներ, ինչպիսին են՝ աշխատասիրությունը, ընկերասիրությունը, հոգատարությունը, վճռականությունը և պատասխանատվության զգացումը։ Հետազոտությունը իրականացրել ենք Կոտայքի մարզի Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոցում։ Փորձարարականդասերն իրականցրել ենք նույն դպրոցի 5-րդ դասարանում։

- ✓ Առաջին փուլում
- ✓ Երկրորդ փուլում
- ✓ Երրորդ փուլում
- ✓ Ի մի բերելով արդյունքները՝ ունեցանք հետևյալ պատկ





`

Ռեսուրս որով աշխատում էինք

Աշխատանքի ընթացք

Աշխատանքի ավարտ և վաճառք

ԻՆՏԵԳՐՎՈՂ ԹԵՄԱ

1 ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

3 ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՆ

4 ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՆ

5 ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՆ

6 ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Ուսուցչի համար կարևոր է իր պրակտիկ գործունեության վերլուծության, կատարելագործման, ինքնազարգացման, շարունակական կրթության համար գիտամանկավարժական տեսական գիտելիքներից օգտվելու կարողությունը:
- Մեփական գիտելիքների հարստացումը, կարողությունների և հմտությունների դրսևորումը և կոլեգաների հետ համագործակցությունը բացառիկ դեր ունեն սովորողների մեջ արժեքային համակարգի, աշխարհայացքի ձևավորման գործընթացում:
- Դասի նպատակին հասնելու լավագույն միջոցներից մեկը ճիշտ մեթոդների և միջոցների ընտրությունն է:
- Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը,աշխարհայացքի ընդլայնումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:
- Կյանքըհասարակությաննապրելուևգործելունորռազմավարությանէպարտադրում,նայդ նորռազմավարությանմշակումնէլամենաընդհանուրիմաստովկազմումէժամանակակիցկրթականքաղաքականությանբովանդակությունը:
- Մեր մանկավարժական պրակտիկայում բոլոր վերոհիշյալ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն են տալիս բացահայտել և զարգացնել սովորողների գեղարվեստական ունակությունները, ստեղծագործական բնույթի հանձնարարությունների իրականացման կարողություն–ները նաև դաստիարակել ցանկացած գործունեությանը ստեղծագործական վերաբերմունքի ցուցաբերման հատկություն:

- Նորարար մանկավարժությունը պահանջում է ամբողջովին վերանայել մանկավարժական՝ ինչպես ուսուցման այնպես էլ դաստիարակչական գործընթացը, դիտարկել սովորողին որպես գործունեության սուբյեկտ:
- Տեխնոլոգիա առարկան բացառիկ դեր ունի երեխայի հոգեբանական, ինքնուրույն, կոնստրուկտիվ մտածելակերպը, ստեղծագործական ունակություններըզարգացման հարցում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բաղդասարյան Ա., «Խաղալով սովորեցնենք», «Նախաշավիղ» Գիտամեթոդական հանդես, Երևան, ԿԱԻ, Կրթության ազգային ինստիտուտ, 2011 No6, էջ 28 - 31:

2. Բաղդասարյան Ա., «Խաղ–պարապմունքները՝ որպես կրտսեր տարիքի երեխաների խոսքի զարգացման միջոց», «Նախաշավիղ», Երևան, ԿԱԻ, 2012 No6, էջ 35 – 43:

3. Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք,-Երևան, «Զանգակ» 2018, 79 էջ:

4. Глумова С. Н., Дидактическая игра как средство развития познавательного интереса младших школьников на уроках математики, Белгород, Вейделевка 2012, 22 с..